Մրցույթ՝ « ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Կենսաբանություն» /10 դասաժամ/, «Մաթեմատիկա» /11դասաժամ/, «Անգլերեն» /8 դասաժամ/, «Պատմություն» /10 դասաժամ/, «Ռուսաց լեզու» /8 դասաժամ/՝առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2025 թ. օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր ժամը 12:00- 15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
«Կենսաբանություն» /10 դասաժամ/ առարկայի մրցույթը տեղի կունենա **2025 թ.-ի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 10:00-ին**,
«Մաթեմատիկա» /11դասաժամ/ առարկայի մրցույթը տեղի կունենա **2025 թ.-ի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 14:00-ին**,
«Անգլերեն» /8 դասաժամ/ առարկայի մրցույթը տեղի կունենա **2025 թ.-ի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 10:00-ին**,
«Պատմություն» /10 դասաժամ/ առարկայի մրցույթը տեղի կունենա **2025 թ.-ի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին**,
«Ռուսաց լեզու» /8 դասաժամ/ առարկայի մրցույթը տեղի կունենա **2025 թ.-ի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 12:00-ին**,
ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովազարդ, Զ. Անդրանիկի 42/1:
Տեղեկությունների համար զանգահարել (093)896-296 հեռախոսահամարով: